




Ձեր Երեխայի Ծրագիրը

Աջակցություն
ձեր երեխայի (3-13 տարեկան)
անհատական ծրագրի պլանի
(IPP) ստեղծման գործում՝
կիրառելով
անձնակենտրոն գործիքներ



Ձեր երեխայի անհատական ծրագրի պլանի (IPP) կառուցումը՝ օգտագործելով անձնակենտրոն գործիքներ



Չորս մասից բաղկացած այս ուղեցույցը պատրաստվել է երեխայի (3-13 տարեկան) համար անձնակենտրոն Անհատական ծրագրի պլանի (IPP) կառուցման հարցում ընտանիքներին օգնելու նպատակով: Այն ներառում է աշխատանքային ձեռնարկ, որը կօգնի ընտանիքներին բացահայտել իրենց երեխայի նախասիրությունները, ուժեղ կողմերն ու կարիքները, ինչպես նաև նպատակները: Դուք նաև կգտնեք խորհուրդներ, որոնք ձեզ օգտակար կլինեն պլանավորման հանդիպումից առաջ, ընթացքում և հետո:

Ի գիտություն

Այս ուղեցույցում պարունակվող նյութը հիմնված է հետևյալի վրա. **«Իմ ընտրությունն է» (Մինեսոտայի զարգացման խանգարումների հարցերով նահանգապետի խորհուրդը)** և **«Ավելին, քան զուտ հանդիպում» (Կալիֆոռնիայի զարգացման ծառայությունների վարչություն - DDS)**

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Colleen Wieck-ին և Մինեսոտայի նահանգապետի զարգացման խանգարումների հարցերով խորհրդին, որ թույլ տվեցին **«Իմ ընտրությունն է»** գրքի որոշ բովանդակություն և ձևաչափ կիրառել Կալիֆոռնիայի ուղեցույցի մեջ:

Շնորհակալություն նաև William Allen-ին Allen, Shea & Associates-ից, ինչպես նաև Mary Lou Bourn-ին Person Centered Consulting-ից այս ուղեցույցի վրա կատարած իրենց աշխատանքի համար:

Պատկերի թույլտվություն.

Նկարիչ՝ Tracey Mensch, “The Balloon Bouquet of Love” (2023)



Բովանդակություն

Այս ուղեցույցի մասին Էջ 2

Նախքան սկսելը Էջ 3

Մաս 1 Ձեր երեխայի Անհատական
ծրագրի պլանին նախապատրաստվելը
(IPP) Էջ 5

- Ձեր երեխայի մասին Էջ 8

Մաս 2 Ձեր երեխայի Պլանավորման հանդիպումից
առաջ Էջ 19

Մաս 3 Ձեր երեխայի Պլանավորման հանդիպումը
Էջ 23

Մաս 4 Ձեր երեխայի Պլանավորման հանդիպումից
հետո Էջ 31

Նշումներ Էջ 37






ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Սույն ուղեցույցը նախատեսված է այն ընտանիքների համար, ովքեր ունեն մտավոր կամ զարգացման խանգարմամբ և Լանթերմանի օրենքի շրջանակներում տարածքային կենտրոնում գրանցված երեքից տասներեք տարեկան երեխաներ: Այն նախատեսված է օգնելու ծնողներին, ինսամակալներին կամ ընտանիքի մյուս անդամներին բացահայտել և արձանագրել իրենց երեխայի նախասիրությունները, ուժեղ կողմերը և նպատակները: Այս ամենը արդյունավետ անհատական ծրագրի պլան կազմելու կարևոր բաղադրիչներ են: Ուղեցույցը կօգնի ձեզ նաև.

- Մտածել այն մասին, թե ինչ կցանկանայիք քննարկել IPP-ի ընթացքում, և թե ինչպես կենտրոնանալ այն բանի վրա, ինչը ամենակարևորն է ինչպես ձեր երեխայի, այնպես էլ ձեր ընտանիքի համար, և ինչպես բացահայտել ձեր երեխայի կարիքները:
- Պլանի մշակման ընթացքում պատմել ձեր երեխայի և ընտանիքի մշակութային ու լեզվական նախասիրությունների մասին:
- Ճանաչել ձեր ընտանիքի իրավունքներն ու իմանալ, թե պլանավորման գործընթացի ժամանակ որքան կարևոր է այդ իրավունքներից օգտվելը:
- Վերանայել ձեր երեխայի անհատական պլանը հավաստիանալով, որ դրանում արտացոլված են երեխայի նախասիրություններն ու կարիքները, ինչպես նաև առաջարկվում են դրանց աջակցության լավագույն միջոցները:





ՆԱԽՔԱՆ ՍԿՍԵԼԸ

ՊԱՐԶ ԼԵԶՈՒ

Սույն ուղեցույցը գրված է պարզ լեզվով: Պարզ լեզվով գրելիս իրերը բացատրելու համար օգտագործվում են սովորական բառեր: Պարզ լեզու նշանակում է հեշտ ընկալելի: Այսպես գրելը հարգանքի դրսևորում է բոլորի հանդեպ: **Չարգացման խանգարում ունեցող մարդկանց և նրանց ընտանիքների, ընկերների ու նրանց շահերը պաշտպանողների համար պետք է ՀԱՍԱՆԵԼԻ լինի նույն տեղեկատվությունը, ինչ մյուսների համար:** Հասանելիություն նշանակում է ունենալ տեղեկատվություն, երբ այն անհրաժեշտ է, և հասկանալ, թե ինչ է գրված, որպեսզի.

- զարգացման խանգարումներ ունեցող մարդիկ, որոնք կարող են կարդալ, կարողանան կարդալ և օգտվել դրանից
- ընտանիքի անդամներն ու ընկերները, որոնք կարդալ չիմացողների շահերի պաշտպանությամբ են զբաղվում, կարողանան հեշտությամբ բացատրել դա նրանց
- այն կարող է հեշտությամբ թարգմանվել այլ լեզուներով՝ պահպանելով նույն նշանակությունը
- մենք բոլորս կարողանանք նույն կերպ հասկանալ տեղեկատվությունը

ՆՇՈՒՄ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ամբողջ ուղեցույցում դուք կտեսնեք այս նշանը՝  բոլոր այն հարցերի համար, որոնք կօգնեն ձեզ կիսվել, թե որքան կարևոր է ձեր երեխայի ու ձեր ընտանիքի մշակույթն ու ինքնությունը ձեզ համար: Այն կօգնի ձեզ նկարագրել, թե ձեր մշակույթի և ինքնության որ մասերն են իսկապես կարևոր ձեր երեխայի զարգացման համար:

ՆՇՈՒՄ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Թեև սույն ուղեցույցը կազմված է անձնակենտրոն մոտեցմամբ, մենք գիտակցում ենք, որ ոմանք գերադասում են ինքնութենակենտրոն (identity-first) մոտեցումը: Անկախ ձեր լեզվական նախապատվությունից, մենք բոլորս կարող ենք համաձայնել, որ միայն ձեր երեխայի առաջնահերթություններով է պայմանավորված IPP գործընթացը: Մենք օգտագործում ենք «**երեխա**» բառը, երբ նկատի ունենք 3-ից 13 տարեկան երեխաներին: Սույն ուղեցույցում «**ընտանիք**» բառը օգտագործում ենք, երբ խոսում ենք երեխայի կյանքում ինամոդի, ծնողի կամ այլ պատասխանատու մեծահասակների մասին: Անպայման ասեք ձեր ծառայությունների համակարգողին, թե որ բառերն եք նախընտրում, որ օգտագործվեն ձեզ և ձեր երեխային ներկայացնելիս:



IPP ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՐՈՇ ԲԱՌԵՐ ԵՎ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Բառ կամ եզրույթ

Ինչ է դա նշանակում

ԿՅԱՆՔԻ ՈԼՈՐՏ

Երեխայի կյանքի մի ոլորտ, որտեղ կարող եք ունենալ նպատակներ, ինչպիսին են *կրթությունը, հարաբերությունները կամ մասնակցությունը համայնքում*:

ԿԱՐԻՔ

Դա հուշում է, թե մարդը ինչի կարիք ունի (օրինակ՝ ծառայությունների կամ աջակցության) որևէ նպատակի հասնելու համար:

ԱՐԴՅՈՒՆՔ

Սա առհասարակ այն է, ինչ բերում է իր հետ նպատակը, օրինակ՝ *Ջերին հազնվում է ինքնուրույն կամ Մոնիկն ուզում է ընկերներ ունենալ*:

ԿԱՐԾԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏԵՍԼԱԿԱՆ

Կարճաժամկետ նշանակում է շուտով իրականացող՝ մեկ տարում կամ դրանից էլ շուտ: Երկարաժամկետ նշանակում է ապագայում իրականացող, օրինակ՝ երկուսից քսան տարում:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Ծառայության համակարգողը տարածքային կենտրոնի աշխատակիցն է, որն օգնում է ձեզ հասկանալ, թե ձեր երեխան ինչ ծառայությունների և աջակցության կարիք ունի, որոնց բավարարման պարագայում կիրադրվեն ձեր ընտանիքի կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարները:

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Դրանք ցույց են տալիս, թե տվյալ անձը ինչից է լավ կամ ինչ է սիրում անել, ինչ հաջողություններ է ունեցել անցած տարվա նպատակների առնչությամբ կամ ինչ նոր բաներ է սովորել:

Եթե կան այլ բառեր կամ տերմիններ ձեր IPP-ում, որոնց մասին կուզենայիք հարցնել ձեր ծառայությունների համակարգողից, պարզապես գրի առեք դրանք և հարցրեք:



Մաս 1

Ձեր երեխայի IPP-ն անձնակենտրոն
գործիքներով կառուցելուն
նախապատրաստվելը



ԻՆՉ Է ԱՆՁՆԱԿԵՆՏՐՈՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ:

Անձնակենտրոն պլանավորումը մի միջոց է, որով ձեր ընտանիքը կարող է հայտնել ուրիշներին, թե ինչն է ձեր երեխայի համար ամենակարևորը (ինչն է նրան երջանկացնում): Դա սկսվում է ծնողների և այլ աջակիցների, օրինակ՝ ուսուցիչների, ընկերների կամ ձեր երեխայի կյանքում առկա այլ մարդկանց հետ ընդհանուր գրույցներից: Որպես արդյունք՝ դուք կներկայացնեք.

- ձեր երեխայի նպատակները կյանքում և թե ինչպիսի աջակցության կարիք ունի նա, որը կօգնի նրան հասնել այդ նպատակներին,
- ինչով է ձեր երեխան սիրում զբաղվել
- ինչից է ձեր երեխան լավ ու ինչ շնորհներով է օժտված:

Այս կարգի գրույցները կօգնեն պատկերացում կազմել, թե ինչ է սիրում ձեր երեխան, և թե ինչն է խանգարում, որ ձեր ընտանիքն ապրի այն կյանքով, որով ուզում է ապրել իր ընտրած հանրույթում: Դա հարկավոր է այնպես անել, որ բոլորը փոխադարձաբար հարգեն միմյանց ու լսեն մեկը մյուսի կարծիքները:

Ինչն է անձնակենտրոն պլանավորման մեջ ամենակարևորը.

- Դուք և ձեր երեխան ձեր կյանքի փորձագետն եք,
- Ղեկը ձեր ընտանիքի ձեռքում է
- Այն, թե ինչպես է ձեր ընտանիքը որոշում ապրել, պետք է արտացոլված լինի վերջնական պլանում:





ԱՆՁՆԱԿԵՆՏՐՈՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՁԵՐ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԸ (IPP)

(Օգտագործողի ուղեցույցից մինչև Lanterman Act (Լանթերմանի օրենք))

Լանթերմանի օրենքը Կալիֆոռնիայի Նահանգային օրենք է, որը ծառայություններ և աջակցություն է խոստանում զարգացման խանգարում ունեցող մարդկանց և նրանց ընտանիքներին: Այս ծառայություններն ու աջակցությունն առաջարկվում են 21 տարածքային կենտրոնների և նրանց ծառայությունների մատուցողների միջոցով: Անհատական ծրագրի պլանը (IPP) համաձայնագիր է ձեր երեխայի ու ընտանիքի և տարածքային կենտրոնի միջև: IPP-ն շատ կարևոր է, քանի որ դրանում նշվում են ձեր երեխայի նպատակները, ինչպես նաև այն ծառայություններն ու աջակցությունները, որոնք տարածքային կենտրոնը կօգնի ձեզ ստանալ: Այս ուղեցույցը կօգնի ձեզ Նախապատրաստվել այդ հանդիպմանը:

Ձեր տարածքային կենտրոնի ծառայությունների համակարգողը կկիրառի անձնակենտրոն մոտեցում ձեր երեխայի հաջորդ IPP-ի վրա ձեզ հետ աշխատելիս: Նոր IPP-ում կնշվեն.

- կարևոր **տեղեկություններ ձեր երեխայի և IPP հանդիպման վերաբերյալ,**
- թե ինչպես է ձեր երեխան **շփվում** և ձեր **տեսլականը** նրա **ապագայի վերաբերյալ,**
- թե ինչպես ձեր երեխան կսովորի **որոշումներ կայացնել** և ձեր երեխայի համար կարևոր կյանքի ոլորտները
- ինչպես վարվել **արտակարգ իրավիճակում:**

Սույն ուղեցույցում ընդգրկված գործողությունները և ստուգաթերթերը օգտագործվել են տարբեր ձևերով:

Ցանկացած նյութ կարող է պատճենվել կամ փոփոխվել՝ համաձայն ձեր կարիքների:



Ձեր երեխայի մասին

Ինչի մասին է այս ձեռնարկը.

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ Է ՍԱ

Հաջորդ էջերում դուք հնարավորություն կունենաք մտածել ձեր երեխայի կյանքի մասին: Ձեզ հնարավորություն է տրվում գրի առնել այն բաները, որոնք կարևոր են ձեր երեխայի համար (նրան երջանկացնում են), և աջակցության տեսակները, որոնց կարիքը նա ունի առօրյա կյանքում: Յուրաքանչյուր էջում դուք կգտնեք որոշ հարցեր ձեր երեխայի մասին և նշումներ կատարելու տեղ:

Դուք կարող եք այս տեղեկությունները բերել ձեր պլանավորման հաջորդ հանդիպմանը, ինչով կօգնեք թե՛ ձեզ, թե՛ ձեր ծառայության համակարգողին կազմել ձեր երեխայի անհատական ծրագրի պլանը (IPP):


Դուք կարող եք նաև օգտագործել ձեր նշումները գրելու **մեկ էջից բաղկացած նկարագրություն**, ինչը կօգտագործվի տանը, դպրոցում և/կամ ցանկացած ծառայության հետ, որն աջակցում է ձեր երեխային:

Նշում. սա միայն մեկ միջոց է սկսելու կազմել ձեր IPP-ն: Նայեք սույն ուղեցույցի վերջում գտնվող Նշումներ էջին պլանավորում սկսելու այլ եղանակների ցանկին ծանոթանալու համար կամ հարցրեք ձեր ծառայության համակարգողին տեղական ռեսուրսների վերաբերյալ:



ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ

Մտածեք այն մարդկանց մասին, որոնց հետ ձեր երեխան մտերիմ է: Դրանք կարող են լինել այն մարդիկ, որոնց ձեր երեխան դիմում է օգնության համար կամ նրանց հետ ամենաշատն է զվարճանում: Մարդիկ, որոնք լավագույնս ճանաչում են ձեր երեխային և հոգ են տանում նրա մասին: Դրանք այն մարդիկ են, որ կարող են օգնել ձեզ նկարագրել, թե ինչն է կարևոր (ինչն է երջանկացնում) ձեր երեխայի համար: Գրեք նրանց անունները գուճավոր շրջանակի մեջ, որը շրջապատում է **ձեր երեխան** բառերը: Դա կարող է ներառել բարեկամներին, դպրոցի մարդկանց, ընկերներին և հարևաններին: Առաջարկեք նրանց կիսվել իրենց մտքերով, մինչ դուք պատասխանում եք հետևյալ էջերի հարցերին:





Գնահատեք և մեծարեք ձեր երեխային

Այստեղ դուք կարող եք խոսել այն բոլոր հրաշալի բաների մասին, որ դուք և մյուսները գնահատում եք ձեր երեխայի մեջ: Ձեր նշումները կարող են ներառել.

- նրա դրական որակները, ուժեղ կողմերն ու տաղանդները,
- այն, ինչ ձեզ և մարդկանց դուր է գալիս նրա մեջ,
- այն, ինչ անում է ձեր երեխան, որը ստիպում է մարդկանց ժպտալ,
- այն, ինչով դուք և մնացած բոլորը հիանում կամ գնահատում եք ձեր երեխայի մեջ:

Ձեր նշումները





Կարևոր է ձեր երեխայի համար

Ինչն է ձեր երեխայի համար կարևոր
նրա տեսանկյունից.

- այնպիսի բաներ կյանքում,
որոնք օգնում են ձեր երեխային
զգալ բավարարված, գոհ,
հանգիստ, կայացած և
երջանիկ,
- մարդիկ, որոնց հետ նա
նախընտրում է լինել կամ
հարաբերություններ, որոնց վրա
նա ամենից շատ է հենվում,
- ինչ-որ բան, որ կարող է անել,
կամ ինչ-որ տեղ, որ կարող է
գնալ (հոբբիներ/
հետաքրքրություններ, երբ և ինչ
հաճախականությամբ),
- ամենօրյա կարևոր
ընթացակարգեր կամ
գործողություններ,
- նրա ինքնությունը, այն
մարդկանց խմբերը, որոնց հետ
սիրում է շփվել,
- նրա ժառանգության այն
մասերը, որոնց հետ նա
ամենաշատն է կապված:

Ձեր նշումները





Կարևոր է ձեր երեխայի համար

Սրանք այն բաներն են, որոնք
դուք և մյուսներն
անհրաժեշտ եք համարում
ձեր երեխային աջակցելու
համար, որ

- մնա ապահով և առողջ,
- զերծ մնա վախից,
օրինակ՝ վախենալուց
կամ ծաղրանքից
- լինի բնակության համար
ընտրած համայնքի
գնահատված և ներբերող
անդամ և,
- սովորի
պատասխանատվություն
ստանձնել:

Ձեր նշումները





Ի՞նչ պետք է իմանան մարդիկ, որպեսզի կարողանան լավագույնս աջակցել ձեր երեխային:

- Ինչպիսի՞ աջակցություն կարող է օգտակար լինել:
- Ի՞նչ պետք է իմանան մարդիկ, որպեսզի կարողանան աջակցություն ցույց տալ ձեր երեխային:
- Կա՞ն այնպիսի տեղեր, որտեղ տարբեր բնույթի աջակցություններ են անհրաժեշտ:
- Ի՞նչ հմտություններ են անհրաժեշտ:
- Ինչպիսի՞ մարդ պետք է լինի, որը կարողանա լավագույնս աշխատել ձեր երեխայի հետ:

Ձեր նշումները



Դուք կարող եք այստեղ գրանցված տեղեկատվությունը օգտագործել **մեկ Էջանոց նկարագրություն** կառուցելու համար: Այն կարող է որպես տեղեկատու ուղեցույց կիրառվել տնային խնամքի, ծրագրի կամ աջակցող անձնակազմի համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Էջ 15:**



Ապագայի տեսլական

- Որո՞նք են ձեր երեխայի վերաբերյալ ձեր ապագա պլանները և երկարաժամկետ նպատակները:
- Ի՞նչ եք ցանկանում, որ ձեր երեխան կարողանա անել, երբ նա ավարտի դպրոցը:
- Ինչպիսի՞ն կլինեն հնարավոր լավագույն կյանքը ձեր երեխայի համար: Որտե՞ղ նա կապրեր: Որտե՞ղ կգնար դպրոց: Որտե՞ղ կաշխատեր: Ինչպիսի՞ համայնքային գործունեություն կունենար: Ինչպիսի՞ հարաբերություններ կունենար: Ի՞նչ ծառայություններ և աջակցություն կստանար:
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեք դուք և մյուսները, որպեսզի օգնեք ձեր երեխային իրագործել այդ նպատակները:

Ձեր նշումները



Ապագայի այս տեսլականը կօգնի ձեզ սահմանել երկարաժամկետ նպատակներ ինչպես դպրոցի անհատական կրթական ծրագրի, այնպես էլ տարածքային կենտրոնի IPP-ի համար: Նայեք սույն ուղեցույցի վերջում տրված **Նշումներ** բաժնում ապագայի տեսլական կազմելու այլ եղանակներին ծանոթանալու համար: Փորձեք ամեն տարի վերանայել ձեր տեսլականը, որպեսզի ստուգեք գրանցված առաջընթացը, և անհրաժեշտության դեպքում փոխեք այն:



ՄԵԿ ԷԶԱՆՈՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երբ ժամանակ ունենաք, կարող եք **Ձեր երեխայի մասին** տեղեկատվությունը օգագործել մեկ էջից բաղկացած նկարագրություն կազմելու համար: Այս էջում ներկայացված է Թոմիի մասին մեկ էջանոց նկարագրությունը: Նրա ծնողները դա օգտագործում են որպես ծանոթություն իր նոր նախադպրոցական ուսումնական հաստատության ուսուցիչների համար: Դուք կարող եք օգտագործել այն մի շարք եղանակներով: Օրինակ, երբ ձեր երեխան սկսում է նոր ուսումնական տարին դպրոցում, միանում է որևէ խմբակի կամ նոր սպորտային թիմի կամ գնում է նոր մանկապարտեզ:

Նպատակն է խթանել ավելի շատ անձնակենտրոն աջակցության դրսևորումը, ինչպիսին էլ որ լինի շրջակա միջավայրը: Հաջորդ էջում դուք կգտնեք դատարկ մեկ էջանոց նկարագրություն:

Մեկ էջանոց պրոֆիլները կամ նկարագրությունները առաջին անգամ մշակվել են Հելեն Սանդերսոնի (Helen Sanderson) և The Learning Community for Person Centered Thinking-ի կողմից:

Մեկ էջանոց նկարագրություն Թոմիի համար

Ինչ են մարդիկ սիրում և ինչով են
հիանում Թոմիի մեջ.

- Խելացի և «թույլ»
- Չվարճալի
- Միշտ բարի
- Սիրում է սպորտը
- Լավ դաշնամուր է նվագում
- Ուրախ ու խոհուն
- Նրա հետ հետաքրքիր է

Ինչպես լավագույնս աջակցել Թոմիին.

- Թոմին հանգիստ և էներգիայով լի երեխա է: Նա պետք սպառնի իր էներգիան՝ կատարելով այնպիսի գործողություններ, ինչպիսին են վազքը, ինչ-որ առարկաների վրայով թռչկոտելը և դրսում խաղալը:
- Թոմին հաճախ իր ցանկություններից առավել կարևորում է ուրիշների ցանկությունները: Նրան երբեմն պետք է խրախուսել, որ ասի այն, ինչ ուզում է:
- Թոմին կարող է մտահոգվել դժվար թվացող իրավիճակներում: Եթե նախապես խոսեք նրա հետ այդ հարցի մասին, նա սովորաբար հանգստանում է:




Ինչն է կարևոր (երջանկացնող) Թոմիի համար.

- Ջրաներկով նկարելը և նկարներ պատրաստելը
- Ամեն օր ընկերների հետ զրուցելը
- Առնվազն շաբաթը մեկ անգամ ընթրիքին պիցցա ուտելը
- Ֆորեսթի, Հիգերի, Դոգիի և Սոֆիայի հետ խաղալը
- Թոնկա բեռնատարերով խաղալը
- Ադի խմորից իրեր պատրաստելը
- Ընկերների հետ սրանց տանը գիշերելը և ամրոցներ կառուցելը
- Բատուտի վրա ցատկելը
- Ադիբուդի ուտելով հեռուստացույց և DVD ֆիլմեր դիտելը
- Սիրելի փափուկ խաղալիքով քնելը
- Նոր բաներ փորձելուց առաջ շատ խրախուսանք ստանալը

Մեկ Էջանոց նկարագրություն՝

Ինչ են մարդիկ սիրում և ինչով են հիանում

Ինչպես լավագույնս աջակցել



Ինչն է կարևոր անձի համար (Երջանկացնող)



ԵՐԵՒԱՅԻ IPP ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՅԱՆՔԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ձեր IPP հանդիպման ընթացքում դուք և ձեր երեխան պատասխանատու եք մեկ կամ մի քանի IPP նպատակներ սահմանելու համար: Այդ նպատակները պետք է տեղին լինեն ստորև բերված կյանքի ոլորտներից մեկում կամ մի քանիսում՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ գիտեք ձեր երեխայի ուժեղ կողմերի և աջակցության կարիքների մասին: Աչքի անցկացրեք ձեր **Նշումները** և ստորև բերված կյանքի այն ոլորտները, որոնք լավագույնս ընդգրկում են ձեր կատարած նշումների շրջանակը:

Կյանքի ոլորտներ

Նպատակներ, որոնց մասին կուզենայիք խոսել

Ընտրություն/Շահերի պաշտպանություն

☐

Ընտրություններ և որոշումներ, որ դուք հուսով եք՝ ձեր երեխան կկայացնի ապագայում: Երեխաների համար դա կարող է լինել սովորել որևէ տնային աշխատանք կատարել կամ հագուստ ընտրել, սովորել արտահայտել և սահմանել անձնական սահմաններ: Ձեր երեխան ներկայումս ունի՞ շահերի պաշտպանի կարիք: Իսկ ապագայում կունենա՞:

Մասնակցություն համայնքում

☐

Հետաքրքրություններ, հոբբիներ, զբաղմունքներ ու վայրեր, որ սիրում է ձեր երեխան: Նոր ձևեր, որոնցով դուք և ձեր երեխան կուզենայիք ժամանակ անցկացնել համայնքում:

Կրթություն/Ուսում

☐

Ձեր երեխայի նպատակները դպրոցում: Կամ նոր բաներ, որոնք ձեր երեխան կցանկանար սովորել:

Աշխատանք

☐

Ի՞նչ է ուզում ձեր երեխան դառնալ, երբ մեծանա:

Բժշկական խնամք/Առողջություն

☐

Ձեր երեխայի առողջական կարիքների կամ դեղորայքի փոփոխություն: Նոր բժիշկներ և առողջական նոր խնդիրներ ձեր երեխայի կյանքում:

Տնային կյանք/Բնակարանային հարցեր

☐

Այն ծառայությունների ու աջակցությունների փոփոխությունները, որոնք պետք են ձեր երեխային տուն փոխելիս կամ ձեր տունն առավել հասանելի ու ապահով դարձնելիս:

Շարունակությունը հաջորդ էջում



Կյանքի ոլորտներ

Նպատակներ, որոնց մասին կուզենայիք խոսել

**Եկամուտ/
Ֆինանսներ**

☐

Դուք թերևս կուզենայիք խոսել ձեր երեխայի արտոնությունների մասին, կամ ինչպես նա կարող է գումար վաստակել ապագայում կամ էլ սովորել՝ ինչպես ծախսել կամ խնայել գումար:

**Անձնական/
Զգացմունքային աճ**

☐

Ծառայություններ և աջակցություններ, որոնց կարիքը կարող է ձեր երեխան ունենալ իր հուզական ինքնազգացողության կամ մտավոր առողջության առումով:

Հարաբերություններ

☐

Աջակցություն, որի կարիքը երեխան կարող է զգալ ընկերների, ընտանիքի անդամների կամ ուրիշների հետ առողջ հարաբերություններ կառուցելիս:

**Անվտանգության
Նկատառումներ**

☐

Ցանկացած անհանգստություն, որ դուք կամ ձեր թիմը կարող եք զգալ ձեր երեխայի ապահովության առնչությամբ, լինի դա տանը, թե հանրության մեջ: Օգնել ձեր երեխային սովորել հասկանալ թույլատրելի սահմանները:

**Աջակցություն
տանը**

☐

Ձեր երեխայի նախապատվությունների, կարիքների և տնային աջակցության հարցում փոփոխություններ:

**Տեղաշարժի
հնարավորություն**

☐

Հանրության մեջ այս պահին ձեր երեխայի տեղաշարժվելու միջոցները և տրանսպորտի փոփոխություններ, որ կօգնեն նրան ներգրավված լինել համայնքում:

Աջակցության լրացուցիչ նպատակային ոլորտներ, որոնք ցանկանում եք ներառել ձեր երեխայի IPP-ում.

Դուք համարյա պատրաստ եք ձեր հանդիպմանը: Կան ևս մի քանի կետեր, որոնց վերաբերյալ հարկ է մտորել, դրանք դուք կգտնեք **Մաս 2-ում՝ Ձեր պլանավորման հանդիպումից առաջ** բաժնում:



Մաս 2

**Ձեր
պլանավորման
հանդիպումից
առաջ**



ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՑ ՇՈՒՐՋ ՀԱՐԿ Է ՄՏՈՐԵԼ, ԵՐԲ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարևոր է մտածել ձեր երեխայի նոր հմտություններ յուրացնելու շանսերն ավելացնելու եղանակների մասին, ինչպես նաև հավաստիանալու, որ դրանք ընդգրկված կլինեն նրա IPP-ում:

Ձեր երեխայի պլանը պետք է ներառի այնպիսի աջակցություններ ու ծառայություններ, որոնք կօգնեն նրան սովորել հենց այն, ինչը կաջակցի նրան ընդառաջ գնալ իր ապագա նպատակներին, օրինակ՝ ավտոբուսով ճանապարհ գնալուն, հագնվելուն կամ էլ այլ մարդկանց հետ հարաբերություններ հաստատելուն:

Երեխաներն ու պատանիները հաճախ նոր հմտություններ են սովորում իրենց շրջապատի մարդկանցից և այնպիսի տեղերում, որտեղ այդ հմտություններն օրինաչափ կերպով կիրառվում են: Մի շարք այլ օրինակներ, երբ երեխաները առավելագույնս լավ են սովորում ինչ-որ բան, թվարկված են ստորև.

- **Երբ նրանք օգտագործում են իրական իրեր**, օրինակ՝ փող, երբ առևտուր են անում խանութից:
- **Երբ նոր հմտություններ են յուրացնում դրանց տեղի ունենալու ժամանակ**, օրինակ՝ ինչպես ավտոբուս նստել դպրոց գնալիս կամ եփել սովորել՝ ուրիշներին օգնելով ճաշ պատրաստել:
- **Ուրիշ մարդկանց նայելով**, օրինակ՝ սովորել ինչ-որ տնային գործեր կատարել՝ նայելով տան մյուս անդամներին կամ օգնելով նրանց:
- **Երբ նրանց սովորած բաներն օգտակար են**, այսպես՝ «խելացի» ժամացույցից կամ համակարգչից օգտվելը, ուրիշ երեխաների հետ խաղալը կամ հեծանիվ վարելը:



ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Լավ կլինի, որ ձեր պլանավորման հանդիպումից առաջ դուք աչքի անցկացնեք ձեր իրավունքները:

Ձեր երեխայի և ընտանիքի իրավունքները IPP գործընթացում ներառում են.

Ով է մասնակցում հանդիպմանը

- Կարող եք հրավիրել մարդկանց, որոնց դուք և ձեր երեխան կուզենայիք, որ ներկա լինեին ձեր երեխայի IPP հանդիպմանը:
- Խնդրեք, որ ձեր վստահելի մարդիկ ներկա լինեն հանդիպմանը աջակցելու ձեր երեխային:
- Թարգմանիչ կամ ֆասիլիտատոր (օգնող), եթե ունեք նրանց ներկայության կարիքը:

Ինչպես է անցկացվում հանդիպումը

- Ձեզ պետք է դիմեն այն անունով և այն դեմքի դերանույններով, որոնք դուք նախընտրում եք:
- Ձեզ պետք է տեղեկությունը տրամադրվի ձեր մայրենի լեզվով:

Հանդիպման որակը

- Ասացեք, թե երբ և որտեղ պետք է հանդիպումը կայանա:
- Հնարավորինս շուտ ստացեք ձեր հարցերի պատասխանները և ձեզ մտահոգող խնդիրների լուծումը:
- Ընտրեք այն ծառայություններն ու աջակցությունները, որոնք պետք են ձեր երեխային, որպեսզի նա կարողանա ապրել և աշխատել առավելագույնս անկախ:
- Ընտրեք ձեր երեխայի համար ծառայություններ ու աջակցություններ առավելագույնս ինտեգրված միջավայրում և նրա ընտրած համայնքում:

Երբ համաձայն չեք հանդիպման կամ պլանի որևէ մասի հետ

- Իմացեք, թե ինչպես վարվեք, երբ դուք կամ ձեր երեխան չեք հավանում նրա պլանի որևէ մաս:
- Հայտնեք ձեր անհամաձայնությունը ձեր երեխայի IPP-ում նշվող ծառայությունների մեջ ցանկացած փոփոխությունների առնչությամբ:



ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԵՋ ԱԶԱԿՑԵԼԸ

Իր կարծիքը բարձրաձայնել սովորելը և ժամանակի ընթացքում ավելի կարևոր որոշումներ ընդունելը երեխայի աճի կարևոր բաղադրիչ է: Դրանք հմտություններ են, որոնք ձեր երեխային կդարձնեն իր շահերի վստահ պաշտպան: Լրացրեք ստորև բերված աղյուսակը ձեր երեխայի հետ, որպեսզի պարզեք, թե որոնք են նրա հավանական IPP նպատակները: Հնարավոր է՝ դուք ցանկանաք ավելացնել նաև այլ պատասխանատվություններ և հմտություններ ձեր երեխայի համար:

Պատասխանատվություն ստանձնելու և որոշում կայացնելու հմտություն	Ո՞ր տարիքում դա կարևոր կլինի իմ երեխայի համար:	Ի՞նչ աջակցության կարիք ունի իմ երեխան: Ինչպե՞ս կարելի է նրան սովորեցնել այդ հմտությունը:
Առողջ թեթև սնունդի ընտրություն		
Օգնություն տան գործերում		
Հագուստի ընտրություն		
Սեփական իրերի համար պատասխանատվություն		
Սոցիալական և միջանձնային սահմանների գիտակցում		
Տնային աշխատանքի կատարում		
Ապահով ընտրությունների կատարում		



Մաս 3

Ձեր երեխայի պլանավորման
հանդիպումը



ԱՅԱ ՄԻ ԶԱՆԻ ԲԱՆ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ IPP ՅԱՆԴԻՊՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Եթե ձեր երեխան ունի նախորդ տարվա պլան, ապա աչքի անցկացրեք այն: Մտածեք այն հարցերի շուրջ, որոնք հաջողությամբ լուծվել են, և քննարկեք դրանք, ինչպես նաև այն հարցերի շուրջ, որոնց դեպքում հաջողություններ չեն եղել: Կարդացեք **Կյանքի ոլորտները՝ նպատակների որոշման հարցաթերթիկի համար** բաժինը, որպեսզի տեսնեք, թե արդյոք դա ընդգրկում է այն ամենը, ինչ կուզեիք բարձրաձայնել հանդիպման ժամանակ: Համոզվեք, որ հանդիպմանը մասնակցում են այն բոլոր մարդիկ, ում կուզեիք հրավիրել, ինչպես նաև որ հանդիպման վայրը և ժամանակը հարմար լինի ձեր ընտանիքին: Եթե ձեզ պետք է թարգմանիչ, խնդրեք, որ տրամադրեն: Եթե ունեք հարցեր ձեր նպատակների կամ այս պահին ձեր ստացած աջակցության մասին, ապա գրի առեք և ձեզ հետ տարեք հանդիպման:

ԱՅԱ ՄԻ ԶԱՆԻ ԲԱՆԵՐ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ IPP ՅԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Վերստին աչքի անցկացրեք այս ուղեցույց-ձեռնարկը և ձեր ձեռքի տակ ունեցեք բոլոր նշումները, որպեսզի համոզված լինեք, որ կքննարկեք ձեր նշած բոլոր կետերը:
- Դրական տրամադրվեք. այս հանդիպումը ձեր ընտանիքի համար է, և բոլոր ներկաները ուզում են ձեզ օգնել:
- Խրախուսեք, որ ձեր երեխան խոսի և մասնակցի իր անհատական պլանի մշակման գործընթացին:
- Հարցեր տվեք և միառժամանակ սպասեք, որպեսզի համոզված լինեք, որ ձեր երեխան հասկանում է, թե ինչի մասին է խոսվում:
- Կատարեք նշումներ կամ ձեզ հետ թող գա մեկը, որ նշումներ կանի ձեր փոխարեն:
- Հիշեցրեք մարդկանց, որ դուք այդտեղ եք գտնվում անհատական պլան գրելու համար, որը կօգնի ձեր երեխային սովորել ինքնուրույն անել ավելի շատ բաներ տանը, խաղալիս, դպրոցում կամ համայնքում:
- Եթե համաձայն չեք IPP-ում գրվածների հետ, հարցրեք ձեր ծառայությունների համակարգողին բողոքարկման տարբերակների մասին:



ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԸ (IPP)



Հետևյալ էջերում կծանոթանաք IPP-ի բաժինների հետ: Կալիֆոռնիայի բոլոր 21 տարածքային կենտրոնները օգտագործում են մի IPP, որը ներառում է այդ բաժինները: Ձեր երեխայի IPP-ն կկազմվի անձնակենտրոն գործընթացի միջոցով: Ահա այն տեղեկությունը, որը պարունակելու է ձեր երեխայի IPP-ն.

- ինչ է կատարվում ձեր ընտանիքի կյանքում,
- ձեր երեխայի ուժեղ կողմերի, շնորհների, տաղանդների և հմտությունների յուրօրինակ համադրությունը,
- ինչն է կարևոր ձեր երեխայի և ձեր ընտանիքի համար,
- ձեր երեխայի ու ձեր ընտանիքի ապագայի նպատակներն ու տեսլականը,
- ծառայությունների ու աջակցությունների ցանկ, որին դուք և ձեր անհատական պլանավորման թիմը համաձայն եք

IPP հանդիպումները կարող են լինել այնքան հաճախ, որքան կփոխվեն ձեր երեխայի կարիքները կամ նպատակները:

Դուք կարող եք հրավիրել ձեր պլանավորման թիմին՝ կապ հաստատելով ձեր ծառայությունների համակարգողի հետ:



ԲԱԺԻՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԳՏՆԵՔ ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ IPP-ՈՒՄ



Ներածություն

Այստեղ դուք կհսկվում եք այն կարևոր տեղեկություններով, որ կցանկանայիք՝ մարդիկ իմանան ձեր երեխայի մասին. ինչ են մարդիկ սիրում նրա մեջ ու ինչով են հիանում, և ինչով է ձեր երեխան ամենից շատ հպարտանում իր կյանքում:

Ինչպես է մշակվել այս պլանը

Այս ամենը պլանավորման հանդիպման մասին է: Որտե՞ղ է կայացել հանդիպումը: Ո՞վ էր ներկա հանդիպմանը: Ինչպե՞ս են բոլորը մասնակցել հանդիպմանը:

Ապագայի տեսլական

Այստեղ դուք պատմում եք ձեր երեխայի կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների մասին: Կարճաժամկետ նշանակում է այնպիսի բան, որը դուք ցանկանում եք, որ տեղի ունենա շուտով, օրինակ՝ մեկ տարում կամ ավելի շուտ: Երկարաժամկետ նշանակում է ապագայում կատարվելիք. օրինակ՝ երկուսից քսան տարվա ընթացքում:

Հաղորդակցում

Կարևոր է, թե ինչպես ենք մենք հաղորդակցվում: Դուք ուզում եք, որ մարդիկ հասկանան ձեր երեխային: Այստեղ է, որ դուք պատմում եմ եք, թե ինչպես է ձեր երեխան սիրում շփվել: Ո՞րն է ձեր երեխայի հետ հաղորդակցվելու լավագույն միջոցը: Ի՞նչ պետք է իմանան մյուսները ձեր երեխայի հետ հաղորդակցվելու համար: Ձեր երեխան ունի՞ օժանդակ պարագաներ կամ սարքեր, որ իրեն պետք են հաղորդակցվելու համար: Ինչպե՞ս է ձեր երեխան ցույց տալիս, որ հասկանում է: Մտածեք, թե ինչ այլ կարևոր տեղեկություններով եք ցանկանում կիսվել:

Շարունակությունը հաջորդ էջում

Այս հանդիպմանը պատրաստվելիս օգտվե՛լ եք այս ուղեղույց-գրքուկի **Ձեր երեխայի մասին** բաժնից: Եթե այո, ապա ձեր IPP-ի այս բաժինների մասին տեղեկությունները կարող եք գտնել հետևյալում՝

- Գնահատեք և ուրախացրեք ձեր երեխային
- Կարևոր է ձեր երեխայի համար
- Ի՞նչ պետք է իմանան մարդիկ ձեր երեխային լավագույնս աջակցելու համար:
- Ապագայի տեսլական
- Մեկ էջանոց նկարագրություն



ԲԱԺԻՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԳՏՆԵՔ ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ IPP-ՈՒՄ



Որոշումների կայացում

Ի՞նչ որոշումներ եք կայացնում ձեր երեխայի համար: Ի՞նչ որոշումներ է կայացնում ձեր երեխան: Արդյո՞ք ձեր երեխան ապագայում կարիք կունենա իր շահերը պաշտպանող անձի: Կա՞ն այլ մարդիկ, որոնք ներգրավված են ձեր երեխայի որոշումների կայացման գործում:

Կյանքի ոլորտ

Սրանք միջոց են, որոնց օգնությամբ դուք կխոսեք ձեր երեխայի նպատակների և այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ցանկացած աջակցության մասին: Կյանքի յուրաքանչյուր ոլորտում լինելու է որևէ ցանկալի արդյունք և նպատակ ձեր երեխայի կյանքի ամենակարևոր ոլորտների համար: Կլինի նաև տեղեկություն այն մասին, թե ինչ է պետք անել՝ օգնելու ձեր երեխային հասնել այդ նպատակին: Դուք կարող եք որոշել ներառել կյանքի այնքան ոլորտներ, որքան ցանկանում եք: IPP-ում պետք է ներառված ունենաք առնվազն մեկ կյանքի ոլորտ:

Պլանավորում արտակարգ իրավիճակների դեպքում

Յուրաքանչյուրի կյանքում կարող է լինել որևէ արտակարգ իրավիճակ, սակայն պլանի մշակումը կօգնի ձեզ և ձեր շրջապատի մարդկանց իմանալ, թե ինչպես վարվել: Ունե՞ք շտապ օգնության ծրագիր ձեր երեխայի համար: Որո՞նք են այն անհրաժեշտ քայլերը, որ կարող եք ձեռնարկել արտակարգ իրավիճակների ժամանակ ձեր երեխային առողջ և ապահով պահելու համար: Ո՞ւմ հետ պետք է կապ հատատել արտակարգ իրավիճակների դեպքում: Ի՞նչ կարևոր բաներ պետք է մարդիկ իմանան և անեն ձեր երեխային արտակարգ իրավիճակների ժամանակ աջակցելու համար:

Այս հանդիպմանը պատրաստվելիս օգտվե՛լ եք այս ուղեղույց-գրքույկի **Ձեր երեխայի մասին** բաժնից: Եթե այո, ապա այդ տեղեկությունը կարող եք գտնել հետևյալում՝

- Ապագայի տեսլական
- Կյանքի ոլորտները նպատակների սահմանման համար ձեր IPP հանդիպման ժամանակ
- Կարևոր է ձեր երեխայի համար
- Ի՞նչ պետք է իմանան մարդիկ ձեր երեխային լավագույնս աջակցելու համար:



ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ

Ծառայություններ և աջակցություն

IPP կազմման հանդիպման ժամանակ դուք խոսելու եք ձեր երեխայի կյանքի ոլորտներում ցանկալի նպատակների մասին: Այդ նպատակների իրագործման համար անհրաժեշտ ծառայությունների ու աջակցությունների վերաբերյալ տեղեկությունները կտրվեն սույն ուղեցույցում: Դուք կգտնեք տեղեկություններ հետևյալի մասին.

- Ով է տրամադրելու ծառայությունները
- Երբ են դրանք սկսվելու և երբ՝ դադարեցվելու
- Ծառայությունը ինչ չափով է տրամադրվելու
- Որքան հաճախ է ձեր երեխան ստանալու ծառայությունը
- Ով է վճարելու ծառայության համար

Ծառայությունների մատուցման պայմանագիր

Այս բաժնում դուք եք որոշում՝ համաձայնվում եք բոլոր ծառայություններին, թե դրանց մի մասին: Դուք նաև կարող եք որոշել նշանակել մեկ այլ IPP հանդիպում 15 օրվա ընթացքում կամ ավելի ուշ՝ քննարկելու ձեր երեխայի ստանալիք ծառայությունները, եթե չեք կարողանում համաձայնության գալ տարածքային կենտրոնի հետ: Եթե, այդուհանդերձ, համաձայնության չեք գալիս տարածքային կենտրոնի հետ, ապա կարող եք դիմել, որ ձեզ ուղարկեն Գործողությունների ծանուցում: Դա գրավոր փաստաթուղթ է, որով բացատրություն է տրվում որոշման վերաբերյալ:

IPP պայմանագիրը և ստորագրության ձևաթուղթը պետք է լրացվի ձեր երեխայի IPP հանդիպման ժամանակ: **Սա կարևոր ձևաթուղթ է:**

Երբ բոլորը դուրս են գալիս IPP հանդիպումից, դուք պետք է իմանաք.

- ձեր երեխայի կյանքում ամեն մի նպատակի ցանկալի արդյունքը
- ծառայություններն ու աջակցությունները, որոնց օգնությամբ ձեր երեխան կհասնի այդ նպատակներին
- ծառայություններ, որոնց համաձայն եք և ծառայություններ, որոնց համաձայն չեք
- Որքան հաճախ պետք է տեղի ունենա ձեր IPP հանդիպումը
- Ինչ կարիքներ կարող է ձեր երեխան ապագայում ունենա
- Ինչպես եք ուզում ստանալ ձեր երեխայի IPP պատճենը
- Ծրագրեր և ծառայություններ, որոնք հասանելի են ձեր երեխայի համար
- Ինչպես բողոք ներկայացնել կամ հայտնել որևէ մեկի թույլ տված օրինախախտման մասին:



ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ

Ի գիտություն

Սույն բաժինը ցույց է տալիս, որ ձեր ծառայությունների համակարգողը տրամադրել է ձեզ տեղեկություններ ձեր IPP պլանավորման ժամանակ: Նրանք պետք է զրուցեն ձեզ հետ այն մասին, թե

- ինչ ծառայություններ և աջակցություններ է ստացել ձեր երեխան անցած տարի,
- ինչ կարող է ձեզ պետք գալ ապագայում,
- որքան հաճախ պետք է լինեն ձեր երեխայի IPP հանդիպումները,
- Ինչպես եք ուզում ստանալ ձեր երեխայի IPP պատճենը
- ծրագրերի մասին, որոնք ընտրության ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում ծառայությունների տրամադրողի և տրամադրման հաճախության մասին,
- Ինչպես բողոք ներկայացնել կամ հայտնել որևէ մեկի թույլ տված օրինախախտման մասին:

Ստորագրություններ

Որպես երեխայի ծնող՝ դուք կստորագրեք IPP-ն: Եթե կան այլ օրինական ներկայացուցիչներ, նրանք պետք է ստորագրեն IPP-ն: Ծառայության համակարգողը նույնպես կավելացնի իր ստորագրությունը:

IPP հարցում

Ձեր երեխայի IPP-ն ավարտելուց հետո դուք հնարավորություն կունենաք մեզ պատմել հանդիպման մասին:

Ձեր մասնակցությունն այս հարցմանը կամովի է:

Մենք չենք հարցնում ձեր անունը, ուստի կարող եք տալ ազատ ու անմիջական պատասխաններ:

Հարցմանը կարող եք մասնակցել ձեր հեռախոսով կամ համակարգչով: Մենք կարող ենք նաև ձեզ թղթային պատճենը ուղարկել փոստով:



Մաս 4

**Ձեր
պլանավորման
հանդիպումից
հետո**



ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ՝ ԱՐԴՅՈՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԱՎ Է ԱՆՑԵԼ

- Ձեր ուզած բոլոր մարդիկ ներկա՞ր էին հանդիպմանը:
- Ամեն ոք պատրաստակա՞մ էր վերանայելու **Ձեր երեխայի մասին և Նպատակներ սահմանելու կյանքի ոլորտներ բաժինները:**
- Ձեր ընտանիքն ու երեխան օգնեցի՞ն որոշել պլանում գրվածը:
- Ստացա՞ք արդյոք տեղեկություններ այն ծառայությունների վերաբերյալ, որոնք ձեզ պետք են ձեր երեխային աջակցելու համար:
- Հնարավորություն ունեցա՞ք տալու ձեր բոլոր հարցերը:
- Ստացա՞ք ձեր բոլոր հարցերի պատասխանները:
- Ձեր երեխայի պլանում ներառված նպատակներն ու արդյունքները հենց ձեր ուզա՞ծն էին:

ԱՅՈ	ՈՉ

Որո՞նք էին հանդիպման լավագույն պահերը:

Ի՞նչը կարող էր ավելի լավ լինել:

Եթե վերոնշյալ հարցերին «ոչ» պատասխանները շատ են, ապա ավելին իմացեք այդ մասին էջ 35-ում ներկայացված **«Խորհուրդներ այն մասին, թե ինչպես վարվել, եթե որոշ բաներ լավ չեն ընթանում»** բաժնում: 31



ԿԻՍԱԿՄՅԱԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Մոտավորապես յուրաքանչյուր վեց ամիսը մեկ վերանայեք **Ձեր երեխայի պլանը**, որպեսզի համոզվեք՝ արդյոք ամեն ինչ ընթանում է այնպես, ինչպես գրված է ձեր երեխայի IPP-ում: Հարց տվեք ինքներդ ձեզ, թե արդյոք ձեր երեխան.

- աշխատում է իր IPP նպատակների վրա,
- ստանում է այն աջակցությունը, որն անհրաժեշտ է ձեր ընտրած համայնքում ապրելու և ակտիվ լինելու համար,
- մասնակցում է որևէ սոցիալական կամ ժամանցային միջոցառման, որին ցանկություն է հայտնում մասնակցել,
- այցելում է իր ընկերներին ու բարեկամներին այնքան հաճախ, որքան ցանկանում է:

ԱՅՈ	ՈՉ

Եթե վերոնշյալ հարցերին «ոչ» պատասխանները շատ են, ապա ավելին իմացեք **«Խորհուրդներ այն մասին, թե ինչպես վարվել, եթե որոշ բաներ լավ չեն ընթանում»** բաժնում:

Ի՞նչը կարող էր ավելի լավ լինել:



Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՈՐՈՇ ԲԱՆԵՐ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ՊԼԱՆՈՒՄ ԼԱՎ ՉԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ

Եթե ներքոնշյալից որևէ մեկը տեղի է ունենում ձեր երեխայի հանդիպման ընթացքում կամ դրանից հետո, տես հաջորդ էջը՝ **«Խորհուրդներ այն մասին, թե ինչպես վարվել, եթե որոշ բաներ լավ չեն ընթանում»:**

Ով է մասնակցում հանդիպմանը

- Այն մարդիկ, որոնց ներկայությունը ձեր երեխայի անհատական պլանի կազմման հանդիպմանը ձեզ ցանկալի էր, այնտեղ չեին:
- Ձեզ և ձեր երեխային թարգմանիչ էր պետք, բայց չէր տրամադրվել:

Հանդիպման որակը

- Թիմը չի քննարկել սույն պլանավորման ձեռնարկում բերված ձեր գաղափարները:
- Ձեր ընտանիքին հնարավորություն չի տրվել վերջնական որոշումներ կայացնել այն մասին, թե ինչ է գրվելու ձեր երեխայի անհատական պլանում:
- Ձեր ծառայությունների և աջակցության վերաբերյալ տեղեկությունները չեն տրվել ձեր երեխային և ձեր ընտանիքին:
- Ձեր երեխայի և ձեր ընտանիքի հարցերը անպատասխան են մնացել:
- Պլանավորման թիմը չի հարգել և անուշադրության է արժանացրել ձեր երեխայի նախասիրությունները:

Հանդիպման որակը

- Չկան ժամկետներ ձեր երեխայի նպատակների իրականացման համար:
- Ձեր երեխան ու ընտանիքը չի ստանում անհրաժեշտ աջակցություն կյանքի փոփոխություններին զուգահեռաբար ձեր երեխայի պլանի թարմացման հարցում:

Երբ համաձայն չեք հանդիպման կամ պլանի որևէ հատվածի հետ

- Ձեր երեխայի անհատական պլանում ներառված նպատակներն ու արդյունքները այն չեն, ինչ ուզում է տեսնել ձեր երեխան ու ձեր ընտանիքը:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ԹԵ ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՈՐՈՇ ԲԱՆԵՐ ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ՊԼԱՆՈՒՄ ԼԱՎ ՉԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ

Երբեմն ինչ-որ բան կարող է փոխվել ձեր երեխայի կյանքում, և նրա IPP-ն այլևս չարդարացնի իրեն: Մեկ այլ դեպքում IPP-ի ծառայությունները չեն մատուցվում այնպես, ինչպես գրված է պլանում: Դուք միշտ պետք է խոսեք ձեր ծառայությունների համակարգողի հետ այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն համապատասխանում ձեր երեխայի ծրագրին: Եթե ձեզ պետք է փոխել ձեր երեխայի անձնակենսորոն ծառայության ծրագիրը, ինդրեք ծառայությունների համակարգողին հրավիրել պլանավորման հանդիպում: Երբ հանդիպման համար դիմում եք տարածքային կենտրոնին, ազատորեն խոսեք նրանց հետ ձեզ անհրաժեշտ փոփոխությունների մասին: Այս կերպ ծառայությունների համակարգողը կարող է պատրաստվել հանդիպմանը, որպեսզի օգնի ձեզ գտնել ձեր երեխային անհրաժեշտ ծառայությունների և աջակցության մատուցման ավելի լավ եղանակ:

Նաև հիշեք.

- Եթե ցանկանում եք, ապա միշտ էլ կարող եք ձեզ հետ բերել ընկերոջ, պաշտպանի կամ այնպիսի մեկին, ով ճանաչում և աջակցում է ձեր երեխային:
- Հավաստիացեք, որ հասկանում եք, թե ինչ են ասում մարդիկ, նույնիսկ եթե անգլերեն չեք խոսում: Տարածքային կենտրոնն այնտեղ թարգմանիչ կտրամադրի, եթե դուք դրա կարիքն ունեք:
- Հանդիպման ավարտին տարածքային կենտրոնը ձեզ կտրամադրի այն ծառայությունների ցանկը, որոնցով նրանք կապահովեն ձեր երեխային: Եթե համաձայն չեք ցանկի հետ, ապա կարող եք բողոքարկել ծրագիրը:
- Դուք կարող եք նաև բողոք ներկայացնել Չարգացման ծառայությունների վարչություն, եթե ինչ-որ բան չստացվի: <https://www.dds.ca.gov/general/appeals-complaints-comments/>



ԼՐԱՑՈՒՑԻՉ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՈՐՈՇ ԲԱՆԵՐ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ՊԼԱՆՈՒՄ ԼԱՎ ՉԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ

Ի հավելումն նախորդ խորհուրդների, կարող եք նաև.

- **Օգնել ձեր ծառայությունների համակարգողին ճանաչել ձեր երեխային և ձեր ընտանիքը:** Խոսեք ձեր ծառայությունների համակարգողի հետ, որպեսզի կարողանաք օգնել նրան ճանաչել ձեր երեխային և ձեր ընտանիքը: Ասացեք նրան, թե ինչպես եք ցանկանում, որ ձեզ հետ կապ հաստատեն՝ Էլեկտրոնային փոստով, հեռախոսով թե տեքստային հաղորդագրության միջոցով: Ապահով վայրում պահեք ձեր ծառայությունների համակարգողի հեռախոսահամարը և Էլեկտրոնային փոստի հասցեն: Կարող եք նաև խնդրել նրանց ղեկավարի անունը, հեռախոսահամարը և Էլեկտրոնային փոստի հասցեն:
- **IPP հանդիպումից հետո օգտագործել այս ուղեցույց-ձեռնարկը կամ պլանավորման մեկ այլ գործիք՝ ձեր երեխայի սիրած ու չսիրած բաների, նախապատվությունների և ապագայի պլանների ցանկացած փոփոխություն գրի առնելու համար:** Սա կօգնի ձեր ծառայությունների համակարգողին պարզել, թե ծառայությունների և աջակցության հարցում ձեր երեխային ինչ փոփոխություններ կարող են անհրաժեշտ լինել:
- **Պահել ձեր տարածքային կենտրոնի բոլոր փաստաթղթերը պահեք մի տեղում:** Թղթապանակում հավաքեք ձեր տարածքային կենտրոնի փաստաթղթերը կամ պահեք ձեր համակարգչում Էլեկտրոնային թղթապանակով:



ՆՇՈՒՄՆԵՐ. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԴՆԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԱՎԱՆԻ ԿԱՄԱՐ

Սույն ուղեցույցը հիմնված է հետևյալի վրա՝ «Սա իմ ընտրությունն է, Լսիր ինձ, Քո անձնական անձնագիրը, Ավելին, քան զուտ հանդիպում.Անձակենտրոն անհատական ծրագրի պլանի,Հիմնական կենսակերպի պլանների, Ընտանիքների համատեղ պլանավորման, Փեյսեր կենտրոնի, և Հելեն Սանդերսոն Ասոշիեյթի գործակալության գրպանի ուղեցույց:

Պլանավորման այլ գործիքների օրինակներ

Ստորև ներկայացնենք պլանավորման գործիքների մի քանի օրինակներ, որոնք կարող եք օգտագործել ձեր երեխայի անհատական պլանի քննարկման հանդիպմանը պատրաստվելիս: Թեև այդ միջոցները կարող են տարբեր լինել, յուրաքանչյուրի նպատակն է աջակցել մարդկանց՝ ստեղծելու պլան, որը հիմնված կլինի ընտրությունների, նախասիրությունների և սոցիալական մասնակցության հիմունքների վրա: Հարցրեք ձեր ծառայությունների համակարգողին անձակենտրոն պլանավորման տեղական ռեսուրսների վերաբերյալ:

- **Աջակցման շրջանակներ և Ընկերների շրջանակներ** - Մարդկանց խմբեր, որոնց դիմում եք ձեզ աջակցելու և ձեր ապագայի պլանավորման հարցում օգնելու նպատակով: <https://inclusion.com/path-maps-and-person-centred-planning/circles-friends-2/>
- **Կյանքի ընթացք** – Ստեղծվել է օգնելու անհատներին և ընտանիքներին զարգացնել լավ կյանքի տեսլականը, ինչպես նաև բացահայտել կամ զարգացնել այն աջակցությունը, որն անհրաժեշտ է նման կյանքով ապրելու համար: <https://www.lifecoursetools.com/lifecourse-library/exploring-the-life-stages/>
- **ՔԱՐՏԵԶՆԵՐ և ՈՒՂԻ** - պլանավորման գործիքներ, որոնք նախատեսված են ցանկալի ապագայի ուղղությամբ հնարավոր գործողությունների քայլերը բացահայտելու համար: <https://inclusion.com/path-maps-and-person-centered-planning/>
- **Անձնակենտրոն մտածողություն և պլանավորում** – օգնում է անհատներին բացահայտել իրենց ուժեղ կողմերը, նպատակները և առողջական կարիքները համայնքում առկա ծառայությունների և ցանկալի արդյունքների հասնելու համար: https://ncapps.acl.gov/docs/NCAPPS_Definitions_RepresentativeExamples_200930.pdf



ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ (DDS)

Տարածքային կենտրոնի ծառայություններ և նկարագրություններ. լրացուցիչ տեղեկություններ այն մասին, թե ինչ են անում տարածքային կենտրոնները և ինչ ծառայություններ են առաջարկում բազմաթիվ այլ լեզուներով: <https://www.dds.ca.gov/rc/rc-services/>

Գտեք ձեր տարածքային կենտրոնը. եթե վստահ չեք, թե որ տարածքային կենտրոնին պետք է դիմել, կարող եք իմանալ այստեղ: <https://www.dds.ca.gov/rc/lookup-rcs-by-county/>

Օմբուդսմենի գրասենյակ. աջակցում է Ձեզ և Ձեր ընտանիքին օգտվելու տարածքային կենտրոնի ծառայություններից, որոնք ձեզ հասանելի են Լանթերմանի օրենքի համաձայն: <https://www.dds.ca.gov/initiatives/office-of-the-ombudsperson/>

Տեղեկատվություն անհատների և ընտանիքների համար. ընտանիքների, ընկերների և պաշտպանների համար, որոնք օգնում են նրանց ապրել իրենց կյանքը լավագույն ձևով: <https://www.dds.ca.gov/consumers/>

Ինքնորոշման ծրագիրն անհատներին և նրանց ընտանիքներին ծառայությունների և աջակցության ընտրության հարցում տրամադրում է ավելի մեծ ազատություն, վերահսկողություն և պատասխանատվություն: <https://www.dds.ca.gov/initiatives/sdp/>

Արտակարգ իրավիճակների պատրաստության պլանավորումն օգնում է անհատներին և ընտանիքներին պատրաստ լինել բոլոր տեսակի աղետներին: <https://www.dds.ca.gov/consumers/emergency-preparedness-consumer/>

Բողոքարկումներ և բողոքներ. խնդիրներն ու մտահոգությունները լուծելու եղանակներ, երբ այլևս ոչինչ չի օգնում: <https://www.dds.ca.gov/general/appeals-complaints-comments/>



Ձեր երեխայի պլանը

Աջակցություն
ձեր երեխայի անհատական
ծրագրի պլանի (IPP)
ստեղծման գործում՝
կիրառելով
անձնակենտրոն գործիքներ



1215 O Street, Sacramento, CA 95814

<https://www.dds.ca.gov>